ABC | DOMAIN

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Էլեկտրոնային փոստային հասցեների տրամադրման և սպասարկման (Mail Service) ծառայության

1. **Ծառայության հասկացությունը**

Կատարողի տարածքում տեղակայված համակարգիչների, գերհամակարգիչների և դրանց պատկանելիքների միջոցով ծառայությունների մատուցում, որի միջոցով Պատվիրատուն հնարավորություն է ստանում օգտագործել իր էլեկտրոնային հասցեները:

2. **Ծառայության մատուցումը**

2.1. Mail Service Ծառայությունից օգտվելու համար Պատվիրատուն Գնացուցակից ընտրում է իր նախընտրած Ծառայության տեսակը և, ներկայացնելով պահանջվող տեխնիկական տվյալները, ինչպես նաև իր անհատական տվյալները (անվանում, հասցե, փոստային ինդեքս, հեռախոսահամար, ֆաքս, էլեկտրոնային փոստի հասցե, անձնագրային տվյալներ, ՀՎՀՀ և այլն) ստորագրում է Էլեկտրոնային փոստային հասցեների տրամադրման և սպասարկման (Mail Service) ծառայության Հավելվածը: Առաջին անգամ Կատարողից Ծառայություններ պատվիրելու դեպքում Հավելվածի հետ միասին Պատվիրատուն ստորագրում է նաև ծառայությունների վճարովի մատուցման Պատվերը կամ առցանց եղանակով Կատարողի www.internet.am կայքի միջոցով կատարում է Պայմանագրի կատարմանն ուղղված գործողություններ (եթե այդպիսի հնարավորություն առկա է Կատարողի կայքով):

2.2. Mail Service Ծառայության մատուցման սկզբի օր է համարվում Ծառայության առաջին ամսվա գինը վճարելու օրը: Ծառայության մեկ օրվա գինը որոշվում է՝ Հավելվածում նշված Ծառայության ամսական գինը բաժանելով տվյալ ամսվա օրերի քանակին:

2.3. Եթե Պատվիրատուն սկսել է օգտվել ծառայություններից, ապա Mail Service Ծառայության մատուցման առաջին օրը չի կարող ավելի ուշ լինել, քան Ծառայությունից փաստացի օգտվելու առաջին օրը:

2.4. Mail Service Ծառայության Հավելվածը գործում է անորոշ ժամկետով, եթե այլ ժամկետ նախատեսված չէ Mail Service Ծառայության Հավելվածով:

2.5. Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի հրաժարվել Mail Service Ծառայության Հավելվածից՝ այդ մասին 30 (երեսուն) օր առաջ գրավոր նամակով տեղյակ պահելով մյուս Կողմին, այս դեպքում կիրառվում են ԸԴՊ-ի 8.1. կետով սահմանված հետևանքները:

3. **Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1. Եթե Պատվիրատուն կամ երրորդ կողմը Պատվիրատուի ծրագրի օգտագործման հետևանքով անընդհատ զանգվածային տեղեկատվության փոխանակում է իրականացնում, ինչը կարող է էականորեն ծանրաբեռնել միջազգային համակարգչային ցանցի աշխատանքը կամ սպառնալ այդ ցանցի անխափան աշխատանքին, ցանցի օգտվողների անձնական կյանքի պաշտպանվածությանը կամ համակարգչի աշխատունակությանը, Կատարողն իրավունք ունի կասեցնել ծառայությունների մատուցումը մինչև խոչընդոտող գործոնի ազդեցության դադարեցումը: Զանգվածային տեղեկատվության փոխանակում է հանդիսանում, մասնավորապես, սակայն չսահմանափակված, միևնույն էլեկտրոնային հասցեից 10 և ավելի այլ էլեկտրոնային հասցեներին նամակների անդադար ուղարկումը: Սույն կետով նախատեսված տեղեկատվության փոխանակման հետևանքով երրորդ անձանց պատճառված վնասների համար պատասխանատվություն է կրում Պատվիրատուն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2. Եթե Պայմանագրով նախատեսված ժամկետում Պատվիրատուն չի վճարում Ծառայության առնվազն մեկ օրվա գինը, ապա Կատարողը սառեցնում է տվյալ Ծառայության մատուցումը՝ պահպանելով տվյալները կասեցման ամսաթվից հաշված 10 (տաս) օր:

4. Սույն Հատուկ Պայմաններում եզրույթներն ունեն նույն նշանակությունը ինչ ԸԴՊ-ում: